

Վ.Բրյուկսովի անվան պետական համալսարան

Ջերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստում

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Լեզվական նյութի ներմուծման և ամրապնդման
ռազմավարությունները հաղորդակցական ուսուցման գործընթացում
(բառապաշարային նյութի հիման վրա)

Ուսուցիչ՝ Մարինե Քոչարյան

Դպրոց՝ Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջն. դպրոց

Աշխատանքի ղեկավար՝ Բ.Գ.Թ. Լիանա Սաֆարյան
ավագ դասախոս Ռուզաննա Կարապետյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն 2

 Բառապաշարի ուսուցման ռազմավարություններ և վարժություններ 4

 Ուսուցչի և սովորողի դերը հաղորդակցության մեջ 9

 Հաղորդակցության մեթոդները 11

 Եզրակացություն 16

 Գրականության ցանկ 17

Ներածություն

Երկար ժամանակ քերականությունը դիտվում էր որպես օտար լեզվի ուսուցման հիմնական խնդիր: Օտար լեզվի հիմնական նպատակը քերականական կառուցվածքների տիրապետման ձեռքբերում է: Քերականական-թարգմանական մեթոդը գերակշռում է օտար լեզվի ուսուցման մեջ:

Հակառակ դրան՝ բառապաշարի ուսուցմանն ու յուրացմանը համեմատաբար աննշան էին կարևորություն տալիս: Բառապաշարի զարգացումը համարվում էր որպես օժանդակ միջոց, հաճախ, համատեքստում բառերը անգիր անելով: Համեմատաբար վերջին տասնամյակում երկրորդ լեզվի հետազոտողների և ուսուցիչների կողմից ուշադրություն դարձրին դրան:

Օտար լեզվի ուսուցման գործընթացում իր կարևոր դերն ունի բառապաշարի ուսուցումը: Ուսումնական առարկայի հիմնական խնդիրն իր արտացոլումն է գտնում ուսուցման հաղորդակցական նպատակում, որը ենթադրում է, որ սովորողների ձեռք բերած գիտելիքները պետք է հիմք հանդիսանան խոսքային կարողությունների և հմտությունների ձևավորման համար, այսինքն, հաղորդակցվել օտար լեզվով: Իսկ բառապաշարի ուսուցման վերջնական խնդիրն է նրա օգտագործումը խոսքային գործունեության մեջ:

Բառապաշարը, որը լեզվի հիմնական նյութն է, անշուշտ, կարևոր է շփվելիս մտքերն արտահայտելիս: Ստորև՝ քերականության և բառապաշարի փոխհարաբերությունների մասին արտահայտել է բրիտանացի լեզվաբան Ուիլկինսը 1976 թվականին, նա պնդում է, որ «առանց քերականության կան քիչ բաներ, որոնք մենք կարող ենք արտահայտել՝ մինչդեռ, առանց բառապաշարի մենք ոչինչ չենք կարող արտահայտել»:

Ուիլկինսը հաստատում է բառապաշարի կարևորությունը հաղորդակցության մեջ: Անբավարար բառապաշարը կամ բառապաշարի դժվարությունները կարող են հանգեցնել հաղորդակցական խոչընդոտների կամ ձախողումների: Առանց բառապաշարի միջնորդության, ոչ մի քերականական կամ այլ լեզվական գիտելիքների տեսակներ չեն կարող օգտագործվել երկրորդ լեզվով հաղորդակցության մեջ:

1960-ականներից սկսած՝ ի հայտ եկան բառապաշարի ուսումնասիրության բազմաթիվ նոր գաղափարներ և մոտեցումներ:

Օտար լեզվի ձեռքբերումը կատարվել է բազմաթիվ լեզվաբանների ջանքերի ու հետազոտությունների շնորհիվ: Կարևոր նպատակներից է նաև սովորողների հաղորդակցականությունը զարգացնելը: Այն զարգացավ որպես լեզվի դասավանդման նշանավոր մեթոդ և աստիճանաբար փոխարինեց նախորդ քերականական-թարգմանական մեթոդին: Վերջին քսան տարիների ընթացքում մեծ ուշադրություն է դարձվում հաղորդակցական լեզվի ուսուցմանը:

Պրակտիկան ցույց է տվել, որ հաղորդակցությունն ունի բազմաթիվ առավելություններ՝ համեմատած քերականական-թարգմանական մեթոդի և զգալի հաջողություն և մեծ ներդրում է ունեցել գերմաներենի դասավանդման գործում:

Նպատակ

Այս ուսումնասիրությունը նպատակ ունի ուսումնասիրել և գնահատել հաղորդակցության արդյունավետությունը: Դասի գնահատականը ներկայացվում է դասի հիման վրա դիտարկում և հարցազրույց աշակերտների հետ:

Մեթոդ

Հաղորդակցական լեզվի արդյունավետությունը ուսումնասիրելու և գնահատելու նպատակով բառապաշարի ուսուցում, գերմաներենի մեկ դասի դիտարկում, թելադրանք: Կիրառվում է վարժություն դասից հետո և հարցազրույց աշակերտների գերմաներենի ուսուցչի հետ որպես հետազոտության մեթոդներ:

Բառապաշարի ուսուցման ռազմավարություններ և վարժություններ

Խոսքային հմտությունների, կարողությունների ձևավորումը ենթադրում է տարբեր տիպի վարժությունների ճիշտ կատարման կարողություն:

Շատ հաճախ ուսուցիչը ներմուծում է նոր բառեր և դրանք առանց ամրապնդելու, աշակերտներին որպես տնային աշխատանք հանձնարարում է բառապաշարային վարժություններ: Արդյունավետ յուրացման պայմաններից մեկը նոր բառերի ներմուծումից հետո ամրապնդող վարժությունների կատարումն է: Բառերի արդյունավետ ուսուցման հաջորդ պայմանը բառային վարժությունների նախապես բանավոր կատարումն է, անկախ այն բանից, այդ բառերը յուրացվում են ռեցեպտիվ թե՞ պրոդուկտիվ նպատակով:


Այսօր, երբ սովորողների հետաքրքրությունները տարբեր են, կարևոր և անհաժեշտ է օտար լեզվի ուսուցումը հետաքրքիր կազմակերպելը: Այս պատճառով նոր բառեր ներմուծելիս մենք չպետք է միայն սահմանափակվենք ուսուցման ավանդական մեթոդներով ու միջոցներով, այլ փորձենք ներկայացնել հնարավորինս հետաքրքիր, որպեսզի սովորողներն էլ հաճույքով և հեշտությամբ սովորեն բառերը:

Այժմ դիտարկենք պրոդուկտիվ և ռեցեպտիվ վարժությունների տեսակներ:

Պրոդուկտիվ վարժությունները հետևյալն են.

1. Ընթրօրինակում.

Վարժության էությունն այն է, որ սովորողները կրկնեն բառերը, նախադասությունները, ուշադրություն դարձնելով նրանց արտասանությանը և հնչերանգին: Բացի այդ այս առաջադրանքից հետո, թեմային վերաբերող ուրիշ վարժություններ կատարելիս, սովորողների արտասանությունը լսելով, հասկացանք, որ վարժությունը օգնել է նրանց այդ հարցում: Բերենք վարժության օրինակը.



Womit kann man in der Stadt fahren?

Man fährt in der Stadt


mit dem Bus.
mit dem Linientaxi.
mit der Straßenbahn.
mit der U-Bahn.

Առարկաների, պատկերների և գործողությունների անվանում:

[Häussermann, Phiepo 1996: 94]

Անդրադառնալով մյուս վարժությանը՝ պետք է նշենք, որ սովորաբար աշակերտները նման վարժությունները հաճույքով են կատարում: Այս առաջադրանքի էությունն այն է, որ տրված են բառերը և համապատասխանաբար նկարները, որոնք պետք է պլաքներով միացնեն, իսկ մյուս վարժության մեջ նկարից օգտվելով՝ գրեն թվերը բառերի դիմաց այնպես, որ նրանց գումարը ճիշտ ստացվի:

Չհամաձայնվել արտահայտված մտքի հետ:



Այս առաջադրանքի դեպքում պետք է սովորողները չհամաձայնվեն արտահայտված մտքի հետ, որը գրված է նկարում և միաժամանակ ցույց է տալիս, իսկ ճիշտ տարբերակը անհրաժեշտ է գրել ներքևում՝ տողերի վրա: Պետք է ասել, որ վարժությունը պարզում է նաև սովորողները արդյոք ամրապնդել են բառերը թե՞ ոչ:

2. Հարց- պատասխան.


Քննարկելով պրոդուկտիվ վարժության այս տեսակը, պետք է նշել, որ ամենաշատ կիրառվողն է: Տեքստին տրվող հարցեր.

- Wohin fahren die Kinder?
- Was besichtigen sie dort?
- Was machen sie dort?
- Wie ist das Wetter?
- Wie ist das Picknick?

3. Բառակազմություն [Häussermann, Phiepo 1996: 120]


Ներկայացնելով այս վարժությունը, պետք է նշել, որ այն նաև մոտիվացնում է օտար լեզու սովորողներին: Երբ նրանք կարողանում են նոր բառեր կազմել, հասնում են շոշափելի արդյունքի, նրանց ոգևորությունը կրկնապատկվում է, ինչը նպաստում է ավելի հաճույքով առաջադրանքը կատարելուն:

Մի դեպքում տրված է Winter բառը՝



Ռեգեպտիվ լեզվական վարժությունները հետևյալն են՝

1. Յուրաքանչյուր շարքում գտնել բառը (բառակապակցություն, նախադասություն), որը չի համապատասխանում շարքին: Վարժության խնդիրն այն է, որ սովորողները կարողանան ճանաչել իրենց ծանոթ բառերը և գտնեն դրանց միջից ավելորդը: Օրինակ՝



2. Կարդալ (լսել)՝

ա) նման հնչյուններով բառեր, որոնք մեր կատարած վարժության դեպքում հորինված են, սակայն հետաքրքիր էր, քանի որ սովորողները լսելուց հետո փորձում էին կարդալ նույն ձևով և արագությամբ, ինչպես նաև ինքնուրույն կազմել նման բառաշարք:

DIHör noch einmal zu. Ordne die Bilder. GUTEN

2 Kannst du Planetarisch?

höpe köre söpe töre wöge böge

hüpe küre süpe türe wüge büge zük

Kannst du das auch so? hepe kere ... hape kare ...

3 Wer bin ich?

3. Բացահայտել բառի իմաստը բառակազմական վերլուծության կամ կոնտեքստի միջոցով:

Գաղտնիք չէ, որ գերմաներեն լեզվում շատ են բարդ բառերը, որոնք նույնիսկ մի քանի բաղադրիչից են կազմված, և որոնց իմաստը հաճախ սովորողներին անհասկանալի է: Տվյալ դեպքում բառիմաստը բացահայտելու համար անհրաժեշտ է ենթարկել բառակազմական վերլուծության՝ այն է, բառը բաժանել բաղադրիչների, որը ներկայացված է ստորև:

5. a) Machen wir aus einem Wort zwei Wörter.

der Herbstmonat = der Herbst die Monate
das Herbstwetter =
die Herbstblätter =
der Herbstwind =
der Herbstregen =

4. Սովորողների շրջանում սիրելի վարժություններից մեկն էլ տրված երկու տարբերակներից ճիշտ տարբերակի ընտրությունն է, որը կարող է ներկայացված լինել ճիշտ է/ սխալ է/այո/ ոչ հարցադրումներով: Ներկայացնենք մեր կատարած վարժություններից մեկը: Վերջինիս էությունն այն է, որ սովորողները կարդան տրված նախադասությունները և հասկանան, նայեն նկարին, համոզվեն՝ ճիշտ է նկարագրում գործողությունը թե ոչ, այնուհետև ընտրեն այո կամ ոչ պատասխաններից մեկը: Կարևոր առաջադրանք է, քանի որ միանգամից ստուգում է հասկացան սովորողները իրենց կարդացածը թե ոչ:

2 Ja oder Nein?

1-4 Les und schau die Bilder an. Mach Kreuzchen X. Ja Nein

Wir spielen Verstecken.		<input type="checkbox"/> <input type="checkbox"/>
Wir spielen Tischtennis.		<input type="checkbox"/> <input type="checkbox"/>
Wir spielen Memory®.		<input type="checkbox"/> <input type="checkbox"/>
Wir spielen Fußball.		<input type="checkbox"/> <input type="checkbox"/>



Վերոնշյալով չեն սահմանափակվում պրոդուկտիվ և ռեցեպտիվ վարժությունների տեսակները, քանի որ բառապաշարը կարելի է ներմուծել, ամրապնդել և կիրառել տարբեր ձևերով: Բառապաշարի ուսուցման, մտապահման, կրկնության համար կան ինտերակտիվ (փոխներգործուն) վարժություններ, որոնց կիրառումը ուսումնական գործընթացը դաձնում է առավել նպատակային:

Ուսուցչի և սովորողի դերը հաղորդակցության մեջ

Ուսուցիչը երկու հիմնական դեր ունի. առաջինը հաղորդակցությունը հեշտացնելն է գործընթացը դասասենյակի բոլոր մասնակիցների և այդ մասնակիցների միջև և տարբեր գործողություններ և տեքստեր կատարելը: Երկրորդ դերը որպես անկախ մասնակից հանդես գալն է ուսումնառության խմբում: Վերջին դերը սերտորեն կապված է նպատակների հետ առաջին դերից և բխում է դրանից:

Միանգամայն ակնհայտ է, որ ուսուցիչների դերը, ավելին է, քան պարզապես հրահանգիչների դերը: Այնտեղ կան շատ այլ դերեր, որոնք ուսուցիչները պետք է խաղան:, դասարաններում ուսուցիչներն ունեն բազմաթիվ դերեր, ինչպիսիք են՝ տնօրենը, կազմակերպիչը, հաղորդավարը, համակարգողը և այլն:

Ուսուցչի պոտենցիալ դերը դասարանում հետևյալն է.

Ա. Ուսուցիչը՝ որպես դասասենյակում վերահսկիչ:

Նա վերահսկում է ոչ միայն այն, ինչ անում են սովորողները, այլև երբ և ինչ լեզվով են նրանք խոսում

Բ. Ուսուցիչը՝ որպես մենեջեր՝ գործունեությունը կազմակերպող.

Գ. Ուսուցիչը որպես գնահատող՝ տալով հետադարձ կապ և խորհուրդ, ինչպես նաև ուղղում և գնահատում:

Դ. Ուսուցիչը՝ որպես կազմակերպված գործունեության մասնակից

Ե. Ուսուցիչը որպես հուշող՝ խրախուսելու սովորողներին, մասնակցել կամ կատարել սովյալ գործունեությունը::

Զ. Ուսուցիչը՝ որպես լեզվի և գիտելիքի աղբյուր.

Գ. Ուսուցիչը որպես հրահանգիչ, փաստացի ուսուցանելով նոր լեզվի կետերը և սովորողներին լեզվական հմտությունների վերապատրաստող:

Սովորողի դերերը հաղորդակցության մեջ

Ավանդական քերականական-թարգմանական մեթոդով ուսուցիչները դասարանում թելադրողներ են: Ուսուցիչները դասագրքի բովանդակությունը փոխանցում են ուսանողներին, իսկ սովորողները պարզապես պատճենում են այն տեղեկատվություն իրենց նոթատետրերում: Նրանք պասիվորեն ստանում են գիտելիքները դասարանում:

Հակառակ դրան՝ սովորողները կենտրոնական դեր են խաղում հաղորդակցության և փոխգործակցության մեջ: Նրանց առաջարկվում է ակտիվորեն մասնակցել

դասարանային գործունեությանը: Սովորողները ունեն ավելի մեծ ինքնավարություն հաղորդակցական գործունեության մեջ. Ինքնավարությունն այն է, որտեղ սովորողները ստանում են պատասխանատվություն իրենց սովորելու համար և ստանձնում կառավարման բոլոր առաջադրանքները, դրանով սովորողները փոխադարձ լուծում են տալիս՝ փոխանակելով մտքեր և կարծիքներ իրար հետ. Նրանք օգնում են միմյանց և սովորում միմյանցից:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը:

Հաղորդակցության մեթոդները

Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Տարբեր մեթոդների և հնարների կիրառումը գերմաներենի ուսուցման մեջ

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

Խորհրդավորություն

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են թույլ առաջ բացահայտել գաղտնիքը: Գուշակություն

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում:

Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը:

Օրինակ՝ կարող եք առանձին թղթերի վրա գրել «կռիվ», «պատերազմ», «տարակարծություն», «անհամաձայնություն» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը: Պատասխանն է՝ կոնֆլիկտը:

Ուսուցիչն առաջարկում է թղթի վրա գրել ամենասիրած ֆիլմի կամ հեքիաթի անունը և մտապահել: Այնուհետև ուսուցիչը թղթերը հավաքում է և խառը բաժանում աշակերտներին: Աշակերտները փորձում են գուշակել, թե ով է գրածի հեղինակը:

Զարմանք, անսպասելիություն

Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է:

Մեջբերումներ

Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն:

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈԻՍ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈԻՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է M-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է

աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:

Մտագրոհ

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը:

Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը:

Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:

Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն

Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն:

Երեխաները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

Օտար լեզուների ուսուցման համար լեզվաբանության մեջ առկա մեթոդներից առավել հայտնի և ամենաշատ կիրառվող մեթոդները հետևյալներն են.

ակտիվ ուսուցման մեթոդ /active learning method/,

երկլեզու մեթոդ /bilingual method/,

ուղիղ մեթոդ /direct method/,

հաղորդակցական մեթոդ /communicative method/,

քերականական-թարգմանական մեթոդ /grammar-translation method/

Ակտիվ ուսուցման մեթոդը համարվում է կարգապահական ոճով դասընթացն անցկացնելու միջոց: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հենց առաջին դասից սովորողի հետ աշխատում են չորս հմտությունները՝ կարդալ, գրել, լսել, խոսել հավասարապես զարգացնելու ուղղությամբ:

Այս դեպքում սովորաբար մեկ դասընթացը բաշխում են չորս հավասար ժամաբաժինների՝ յուրաքանչյուրի ընթացքում մեկ հմտության շուրջ աշխատելու համար: Տվյալ դասընթացի համար նախատեսված բառապաշարի և քերականության շրջանակներում աշխատանք է տարվում չորս հմտությունները զարգացնելու ուղղությամբ:

Սովորաբար այս մեթոդի կիրառումը գործնականում հետևյալ կերպ է արտահայտվում. ընտրվում է համապատասխան քերականական նյութ պարունակող տեքստ, որը սովորողը կարդում է, թարգմանում, դուրս գրում անծանոթ բառերն ու արտահայտությունները, կատարում այնպիսի վարժություններ կամ առաջադրանքներ, որոնք ստուգում են բառապաշարի և քերականության յուրացումը և կատարելագործում դրանք, հետո դասավանդողը օտար լեզվով խոսում է այդ տեքստի շուրջ, մեկնաբանություններ անում և նույնը պահանջում սովորողից: Վերջինս փորձում է հասկանալ խոսքը և խոսելու միջոցով վերարտադրել ստացած գիտելիքները: Այսպիսով, դասընթացի ընթացքում սովորողը և՛ յուրացնում, և՛ կիրառում է նյութը:

Հաջորդող դասընթացների ընթացքում հմտությունների շուրջ աշխատելիս դասավանդողը պարբերաբար անդրադառնում է նախորդ դասերի նյութերին, որպեսզի սովորողը լավագույնս մտապահի դրանք:

Հաշվի առնելով ուսումնագիտական ոլորտի պահանջները, կարծում ենք, ակտիվ ուսուցման մեթոդը ամենարդիականն է, քանի որ մեր օրերում առավել քան կարևորվում է լեզվի ակտիվ՝ տեսական և գործնական իմացությունը:

Երկլեզու մեթոդը նույնպես կարգապահական ոճում կիրառվող մեթոդներից է: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ սովորողը լեզուն սովորում է «թեմատիկ սկզբունքով»՝ կոնկրետ իրավիճակներում ըստ անհրաժեշտության հաղորդակցվելու համար: Կարելի է ասել, այն հիմնականում ենթադրում է բանավոր խոսքի՝ հաղորդակման ուսուցում:

Յուրաքանչյուր դասաժամի համար սովորողը ընտրում է թեմա, նախապես իր մայրենի լեզվով գրառում է բառեր, բառակապակցություններ և արտահայտություններ, կազմում նախադասություններ, ըստ անհրաժեշտության նաև տեքստ:

Դասընթացի ժամանակ դասավանդողը թարգմանում է սովորողի ներկայացրած նյութը, բացատրում արտահայտությունների և նախադասությունների կազմության քերականական ու շարահասակական սկզբունքները, դրանցում առկա ժամանակաձևերը և այլն: Նա նաև սովորողի հետ կազմում է հաղորդակցման ժամանակ թեմայի հետ առնչվող հավանական հարցաշար՝ պատասխանների հնարավոր տարբերակներով: Սովորողը դասավանդողի ներկայությամբ կարդում է օտար լեզվով թարգմանված ամբողջ նյութը, դասավանդողը շտկում է առոգանությունն ու արտասանությունը, հանձնարարում է հաջորդ դասի համար անգիր սովորել այն և պատրաստ լինել այդ թեմայով հաղորդակցվելու:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ մեկ թեմա մշակելիս և թարգմանելիս առնչվում ենք բազում քերականական ձևերի հետ, որոնք մեկ օրում բացատրել և առավել ևս յուրացնել հնարավոր չէ:

Այս դեպքում դասավանդողը, գործի դնելով իր մանկավարժական հմտությունները և հետևելով օտար լեզվի ուսուցման ծրագրային հերթականության սկզբունքներին, յուրաքանչյուր դասընթացին անդրադառնում է քերականական որոշ թեմաների՝ մյուսների բացատրությունը թողնելով հաջորդող դասաժամերին:

Երկլեզու մեթոդը սովորողների մոտ հատկապես զարգացնում է բանավոր թարգմանություն կատարելու հմտությունները, քանի որ ողջ ուսուցման ընթացքում երկու լեզուներն էլ համագոր և հավասարապես «աշխատում են»:

Կարելի է ասել, յուրաքանչյուր թեմայի անդրադառնալիս՝ նախ բախվում ենք մայրենի լեզվով այդ թեմայի շուրջ խոսք կառուցելու և զարգացնելու պահանջին:

Ուղիղ մեթոդը օտար լեզվի ուսուցումը նույնացնում է մայրենի լեզվի հետ: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հիմնական շեշտը դրվում է բանավոր հաղորդակցության վրա: Այս դեպքում ամբողջությամբ բացակայում է թարգմանությունը (միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում), բառապաշարը դասավանդվում է նկարներով, պատկերներով, ժեստերով և արտաքին շարժումներով ցուցադրելու և հասկացնելու միջոցով:

Ուղիղ մեթոդի դեպքում օտար լեզուն օգտագործվում է հանպատրաստից՝ իրավիճակի թելադրանքով: Դասավանդողն ու սովորողը ուսուցումը սկսում են կենցաղային թեմաների շուրջ՝ ամենաշատ կիրառվող տարրական բառապաշարով: Սակայն նշումներ կատարելը պայմանավորված է սովորողի հիշելու ունակությամբ: Ցանկալի է անգամ նոր նյութի դեպքում խուսափել գրառումներ կատարելուց, պարզապես հաճախ կրկնելով հիշել:

Ուղիղ մեթոդը սովորողի մոտ զարգացնում է ինքնուրույն օտար լեզու սովորելու հմտություններ: Ուսուցման որոշակի փուլում սովորողը ձեռք է բերում նորը հեշտությամբ կռահելու ունակություններ:

Մակայն, կարծում ենք, այս մեթոդը բացասական կողմ ունի: Միայն հաղորդակցվելով սովորելը՝ քերականական շատ ժամանակաձևեր դուրս է թողնում գործածությունից: Սովորողը խոսքը կառուցում է իր համար հեշտ տարբերակով:

Հաղորդակցական մեթոդը, կարելի է ասել, երկլեզու և ուղիղ մեթոդների համադրումն է: Այստեղ նպատակը հաղորդակցական հմտություններ զարգացնել է, ոչ թե լեզվի կառուցվածքային գիտելիքները:

Ինչպես երեխան է լսելով և կրկնելով սկսում խոսել՝ առանց հասկանալու քերականական կառուցվածքի առանձնահատկություններն ու նրբությունները, այնպես էլ սովորողն է հիմնականում առանց նշումների, միայն լսելով և խոսելով յուրացնում լեզուն:

Այս մեթոդը երկլեզու մեթոդի հետ շատ ընդհանրություններ և տարբերություններ ունի:

Նման է, քանի որ չի արգելում մայրենի լեզվի գործածմամբ ճշտումներ կատարել, անհասկանալին պարզաբանել, սակայն տարբեր է նրանով, որ շեշտը չի դնում քերականական կառուցվածքների ուսուցման վրա՝ պարզաբանելով, որ դրանք, ուսուցման որոշակի փուլում, ինքնստիճանի հասկանալի կդառնան սովորողի համար:

Ուղիղ մեթոդի հետ նույնպես ընդհանրություններ կան: Հաղորդակցական մեթոդը շեշտը դնում է հենց հաղորդակցման վրա, նվազագույնի է հասցնում քերականական բացատրությունները և մայրենի լեզվի կիրառումը, սակայն չի արգելում դրանք:

Քերականական-թարգմանական մեթոդը համարվում է «ուսուցչակենտրոն» մեթոդ, քանի որ մատուցվող ամբողջ նյութը բացատրելը, թարգմանելը, արտահայտություններ կազմելը և այլն, դասավանդողն է կատարում, իսկ սովորողն աշխատում է մշակված նյութի հետ:

Եզրակացություն

Բառապաշարի ուսուցումն ու յուրացումը կարևոր դեր է ստանձնել երկրորդ լեզվի ուսուցման գործում: Հաղորդակցական հմտությունը արդյունավետ է ժամանակակից հումանիտական և հաղորդակցական բազմաթիվ տեսությունների վրա հիմնված ուսուցման գործում:

Գերմաներենի դասի դիտարկումը, թելադրությունը և հարցազրույցը ցույց են տալիս, որ համեմատությունը ավանդական քերականությամբ՝ թարգմանության մեթոդով, հաղորդակցական լեզվով տալիս է արդյունքները:

Այս բոլոր մեթոդները և մեթոդական հնարները օժանդակում են դասավանդողների գործունեությանը, դարձնում են բազմաբովանդակ, համապատասխան սովորողի հետաքրքրություններին, որոնք նպաստում են փոխկապակցված, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը: Սովորողների համար օգտակար և արդյունավետ է սովորել այնպիսի մեթոդական հնարներով, որոնք զարգացնում են քննադատական, ստեղծագործական մտածողության հմտությունները, ինքնուրույն մտածելու կարողությունը: Նորագույն տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են աշակերտներն և ուսուցիչներն ամբողջ աշխարհում: Դասավանդմանն ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Տեխնոլոգիաներն նոր պահանջներ են ներկայացնում հիմնական կարողություններից բացի՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողությունների տիրապետմանը: Նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:

Գրականություն

Աստվածատրյան Մ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Լույս, Երևան 1985
Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ
հիմնադրամ, Հայաստան 2020

Häussermann, U., Phiepo, H.: Aufgaben-Handbuch: Deutsch als Fremdsprache. Abriß einer
Aufgaben- und Übungstypologie, München: Iudicium Verlag, 1996

Müller, Bernd-Dietrich: Wortschatzarbeit und Bedeutungsvermittlung, Fernstudienheit 8,
Berlin/München: Langenscheidt, 2004

Storch, Günter: Deutsch als eine Fremdsprache. Eine Didaktik: Theoretische Grundlagen und
praktische Unterrichtsgestaltung. Stuttgart: UTB, 2015

ԴԱՍԱԳՐՔԵՐ

1. Բիմ Ի. Լ., Գերմաներեն: Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք,
Անտարես, Երևան 2014
2. Բիմ Ի. Լ., Գերմաներեն: Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք,
Անտարես, Երևան 2015
3. Բիմ Ի. Լ., Գերմաներեն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք,
Անտարես, Երևան 2014
4. Kopp, G., Büttner, S., Alberti, J., (2008), Planetino 1 Deutsch für Kinder, Ismaning:
Hueber
5. Kopp, G., Büttner, S., Alberti, J., (2009), Planetino 2 Deutsch für Kinder, Ismaning:
Hueber